ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 16 >> հունիսի 2014 թվականի N: 24 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 07 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգի>> 4-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2014 թվականի հունիսի 9-ի թիվ 1/23.8.06/11193-14 գրությունը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող Շիրակի մարզային հանձնաժողովի կազմում Գնել Հայրապետյանի փոխարեն ընդգրկել Լևոն Գասպարյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի փետրվարի 10-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող Շիրակի մարզային հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2006 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 122 կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 07 կարգադրության հավելվածում <<Գնել Հայրապետյան, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Շիրակի տարածքային բաժնի պետի տեղակալ, անդամ,>> բառերը փոխարինել <<Լևոն Գասպարյան, ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության Շիրակի մարզի տարածքային բաժնի պետ, անդամ,>> բառերով:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է